ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5415-Ա « 05 » նոյեմբերի 2026թ.

ԿԱՐԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ Հ.143 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1.5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 60-րդ և 61-րդ կետերով, 2023թ.փետրվարի 9-ի N181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Կարեն Հարությունյանի դիմումը՝

1. Կարեն Վոլոդյայի Հարությունյանին՝ 2026 թվականի նոյեմբերի 5-ից նշանակել «Երևանի Մ. Խորենացու անվան հ.143 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնում՝ որպես ժամանակավոր պաշտոնակատար:

2. «Երևանի Մ.Խորենացու անվան հ.143 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ժաննա Հովսոյանին ազատել նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պարտականությունների կատարումից:

3. «Երևանի Մ.Խորենացու անվան հ.143 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Հարությունյանին:

4. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ